



In Memoriam
BISHOP NSHAN TOPOUZIAN
(1966-2010)

Prelate of the Armenian Diocese of Aderbadagan (Iran)

His Holiness Aram I, Catholicos of the Great House of Cilicia, His Eminence Archbishop Oshagan Choloyan, Prelate of the Eastern United States, and the Cilician Brotherhood announce with immense sorrow the untimely passing of the Prelate of the Diocese of Aderbadagan, Bishop Nshan Topouzian, which took place on Tuesday, April 27, 2010, in Armenia following a brief illness.

The Extreme Unction and burial services will take place in Tabriz, Iran.

By the order of the Prelate, Archbishop Oshagan, Requiem Services for the soul of the late Bishop will take place in all Eastern Prelacy churches on Sunday, May 2.

May his memory be forever blessed.

PRELACY SECRETARIAT

April 27, 2010

Biography

BISHOP NSHAN TOPOUZIAN

Bishop Nshan Topouzian, (baptismal name Ara), was born in 1966 in Lebanon. In 1984, after completing the five-level *Jarankavorats* (high school) program at the Seminary of the Holy See of Cilicia, he was ordained a deacon. During the next three years he completed the Seminary's *Undzayaran* (college) program, and in 1987 he was ordained a celibate priest and renamed Nshan by His Holiness Karekin II, Catholicos of the Great House of Cilicia, of blessed memory.

In February 1991 he was assigned to Tabriz, Iran, as a visiting priest to the Aderbadagan Diocese. In May of the same year, His Holiness Karekin II appointed him Pontifical Legate of that Diocese. After serving for nearly 11 years, in August 2002 he was elected Prelate of the Aderbadagan Diocese. On June 4, 2006, he was elevated to the rank of Bishop by His Holiness Aram I, Catholicos of the Great House of Cilicia.

Bishop Nshan's 15-year service to the Aderbadagan Diocese was very productive. With his leadership and effort by the National Representative Assembly and the diocesan council, Tabriz's four churches and prelacy were totally renovated, the Nareg residences in Tabriz were built, the Ararat Cultural Center was established, and a new church was built in Urmia.

Bishop Nshan played a major role in the renovation and preservation of historical churches and monasteries in Northern Iran, namely St. Tadeh and St. Stepanos Monasteries and the Church at Jorjor. Under great personal danger several different times he photographed, along the banks of the Arax River, the destruction of thousands of khatchkars in the Armenian cemetery in Old Julfa in Nakhichevan by the Azerbaijan army. Thanks to the photographs he took, the Armenian people and international governments and agencies were made aware of the destruction taking place.

Bishop Nshan who was fluent in Persian and Azeri-Turkish was able to establish good relations with officials in Northern Iran and defend the rights of the Armenian Church and people within the historical Aderbadagan boundaries.

His death is a great loss to the Great House of Cilicia, the Aderbadagan Diocese, and for the entire Armenian church and nation



ՀԱՆԳԻՍՏ

Տ. ՆՇԱՆ ԵՊՍ. ԹՕՓՈՒԶԵԱՆԻ

ԱՌԱՋՆՈՐԴ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, Բարձրաշնորհ Տ. Օշական Արքեպիսկոպոս Զօրոյեան, Առաջնորդ Ամբրիկայի Արեւելեան Թեմիս, եւ Կիլիկեան Ս. Աթոռի Միաբանութիւնը խոր վիշտով կը գուժեն իրենց միաբանակից եղբօր եւ Ատրպա-տականի Հայոց Թեմի Առաջնորդին՝

Տ. ՆՇԱՆ ԵՊՍ. ԹՕՓՈՒԶԵԱՆԻ

(1966-2010)

վաղաժամ վախճանումը, որ պատահեցաւ Երեւանի 27 Ապրիլ, 2010-ին, Հայաստանի մէջ, յետ կարճատեւ հիւանդութեան:

Հոգեւոյն Սրբազանի վերջին օժման եւ թաղման արարողութիւնը
պիտի կատարուի Թաւրիզի մէջ:

Առաջնորդ Սրբազան Հօր՝ Տ. Օշական Արքեպիսկոպոսի հրահանգով, Կիրակի, 2 Մայիսին,
Ամերիկայի Արեւելեան Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ հոգեհանգստեան պաշտօն պիտի
կատարուի հոգեւոյն Սրբազանի հոգւոյն համար:
Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի

ԴԻԻԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

Ապրիլ 27, 2010

ՀՈԳԵԼՈՅՍ Տ. ՆՇԱՆ ԵՊՍ. ԹՕՓՈՒՉԵԱՆ

Հոգեւոյն Տ. Նշան Եպիսկոպոս Թօփուզեան, աւագանի անունով Արա, ծնած է 1966-ին, Շթորա, Լիբանան: 1984-ին, աւարտելէ ետք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի Ժառանգաւորաց հնգամեայ ուսումնական շրջանը, ձեռնադրուած է Սարկաւազ: Յաջորդ երեք տարիներուն աւարտած է Դպրեվանքի Ընծայարանի ուսումնական շրջանը եւ 1987-ին ձեռնադրուած կուսակրօն քահանայ, ձեռամբ՝ Երջանկայիշատակ Տ. Տ. Գարեգին Բ. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին եւ վերակոչուած Նշան Աբեղայ:

Փետրուար 1991-ին, որպէս այցելու հոգեւորական Ատրպատականի Յայոց Թեմին առաքուած է Թաւրիզ, Իրան: Նոյն տարուան Մայիսին, Երջանկայիշատակ Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոս զինք նշանակած է այդ Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ: Շուրջ տասնըմէկ տարի, որպէս Կաթողիկոսական Փոխանորդ ծառայելէ ետք, Օգոստոս 2002-ին ընտրուած է Ատրպատականի Յայոց Թեմի Առաջնորդ: Յունիս 4, 2006-ին, Եպիսկոպոսական ձեռնադրութիւն ստացած է ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին:

Ատրպատականի Թեմէն ներս Հոգեւոյն Սրբազանի տասնընը տարիներու ծառայութիւնը եղած է բազմաբեղուն: Իր գլխաւորութեամբ եւ Թեմի Պատգամաւորական Ժողովի ու Թեմական Խորհուրդի սերտ գործակցութեամբ հիմնովին նորոգուած են Թաւրիզի չորս եկեղեցիներն ու Առաջնորդարանը, կառուցուած են Թաւրիզի «Նարեկ» բնակարանային Համալիրը եւ Հայ Մշակութային Արարատ Կազմակերպութեան Կեդրոնատեղին: Ուրմիոյ մէջ կացուցուած է նոր եկեղեցի:

Հիւսիսային Իրանի տարածքին գտնուող պատմական բազմաթիւ եկեղեցիներու եւ վանքերու, յատկապէս Ս. Թադէի եւ Ս. Ստեփանոս Նախավկայի վանքերուն ու Ծործորի եկեղեցւոյ նորոգութեանց եւ պահպանումի գործին մէջ մեծ վաստակ ունէր հոգելոյս Սրբազանը: Քանիցս իր անձը վտանգի ենթարկելով, Արաքս գետի Իրանական ափէն հետեւած ու նկարահանել տուած էր Արաքս գետի միւս ափին, Նախիջեանի սահմանին մէջ գտնուող հին Ջուղայի պատմական գերեզմանատան հազարաւոր խաչքարերու քանդումը Ազրայէճանի բանակին կողմէ եւ այդ փաստագրական նկարահանումներու շնորհիւ, հայ ժողովուրդին ու միջազգային պետական շրջանակներու եւ կազմակերպութեանց ուշադրութիւնը հրաւիրած բարբարոսական այդ արարքներուն վրայ:

Հոգելոյս Սրբազանը, որ լաւապէս կը տիրապետէր պարսկերէնի եւ ազերի թրքերէն լեզուներուն, կրցած էր լաւ յարաբերութիւններ հաստատել հիւսիսային Իրանի պետական իշխանութեանց հետ եւ այդ յարաբերութեանց շնորհիւ պաշտպանել հայ եկեղեցւոյ ու ժողովուրդի իրաւունքները Ատրպատականի պատմական թեմի սահմաններէն ներս:

Իր վաղաժամ վախճանումը մեծ կորուստ մըն է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Ատրպատականի Հայոց Թեմի ժողովուրդին եւ ընդհանրապէս հայ եկեղեցւոյ եւ ժողովուրդին համար:

ԴԵՌ ՄԻՒՌՆԸ ՉԷ ՉՈՐՑԱԾ, ՍՐԲԱԶԱՆ (ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ՝ Տ. ՆՇԱՆ Ս. ԵՊՍ. ԹՕՓՈՒՋԵԱՆԻ ՎԱՂԱԺԱՄ ՎԱՒՃԱՆՄԱՆ ՏԵՄԻՐ ԱՌԻԹՈՎ)

Կանաչ խոտը բռնկեցաւ տապանաքարին մօտ: Գերեզմանի նոճիներն անգամ զարմացան վաղաժամ այս այցելութեան, որովհետեւ իրարու հետ կը գրուցէին ըսելով, թէ միւռնի բոյր կ'առնենք տակաւին ճակատէն անոր՝ որուն մեր մօտ վերջնական հանգիստի գալը շա՛տ կանուխ է դեռ:

Այո՛, միւռնը թաց էր դեռ ճակատին վրայ Ատրպատականի Հայոց Թեմի երիտասարդ Առաջնորդ՝ Նշան Սրբազանին, որուն եպիսկոպոսական օժան ուրախառիթ դէպքը, երէկուան չափ թարմ յուշ ունի տակաւին բոլորիս յիշողութեան մէջ:

Մահուան անգթութեան մասին բազմաթիւ զրոյցներ կրնան պատմուած ըլլալ, սակայն անոնք իրականութեան կը համապատասխանեն միայն այն ատեն, երբ անիկա իր մանգաղը շարժէ երիտասարդ հոգիներու ուղղութեամբ, ու յաջողի հնձել անոնցմէ մէկուն գլուխը:

Դպրեվանքի գրասեղաններուն նստած գեղադէմ, կանաչ աչքերով Արան շուտով հասակ առաւ, միշտ հոգածութիւնը վայելելով իր պատասխանատուներուն, եւ ի վերջոյ որոշեց հոգեւորական ասպարէզը ընդգրկել, զինք ձեռնադրող Հայրապետին՝ Տ.Տ. Գարեգին Բ. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին աւագանի անունը ժառանգելով: Մէկ դասարանի տարբերութիւն կար մեր երկուքին միջեւ, սակայն բնա՛ւ երկու խումբի հասկացողութիւն: Դպրեվանքիցիներս հասարակաց հետաքրքրութիւններ ունէինք մեր եկեղեցւոյ ու սեփական ապագային առնչուող, որոնք կը քանդէին ամէն տեսակի բաժանման պատեր կամ պատնէշներ:

Կեանքի դժբախտ պատահարներու դիմաց գտնուելու վարժութիւնը հետզհետէ ձեռք ձգեց Նշան Սրբազան, երբ տակաւին Դպրեվանքի ուսանող, կորսնցուց իր եղբայրներէն երկուքը՝ զոհ Լիբանանի քաղաքացիական պատերազմին: Մանկութեան տարիներուն կորսնցուցած ըլլալով հայրը, արդէն պարզապէս քաղցր յուշ մըն էր անոր անունը իրեն համար: Վերջընթերը պիտի ըլլար իր մօր կորուստը Թաւրիզի մէջ, որուն մահով վերջնականապէս մօտէն պիտի հեռանար իր պահապան հրեշտակը, որ անքուն հսկողն ու խնամատարն էր իր վտիտ առողջութեան: Իսկ վերջինը՝ ինք պիտի ըլլար, երիտասարդ տարիքին, վառ տեսիլքը աչքերուն, ու ծառայութեան կանչը հոգիին մէջ:

Երիտասարդ հոգեւորականի անփորձ տարիքին, լուսնէն պոկուած երկնաքարի նման ինկաւ Ատրպատականի պատմական Թեմին մէջ, ուրկէ անցած Մելիք-Թանգեաններու եւ պատուական բոլոր առաջնորդներու փորձառութեան շունչը ու Թեմին մէջ քանդակած անոնց ոգին պիտի կազմաւորէին զինք շատ կարճ ժամանակաշրջանի ընթացքին: Շատ չանցած, արդէն պատրաստ թեկնածուն էր ան իր Թեմի հոգեւոր ղեկավարութեան համար, ուստի, Թեմական Խորհուրդը 2002 թուականի Օգոստոսին զինք պիտի ընտրէր որպէս Առաջնորդ Ատրպատականի Յայոց Թեմին: Իսկ 4 Յունիս 2006-ին ան պիտի եպիսկոպոսանար, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի հայրապետական տնօրինումով ու Թեմական Խորհուրդին փափաքով:

Ընկերայնութեան հետ ընկերասիրութիւնը, Նշան Սրբազանի նկարագրին բնորոշիչ գիծերէն մէկը եղաւ: Միաբանութեան ամենէն վերջին ձեռնադրեալ նորեկ անդամն իսկ շուտով կը վայելէր իր մտերմութիւնը երբ Անթիլիասի Մայրավանքին մէջ հանդիպէր իրեն, խօսակցական լեզուին ամենէն պարզ բառերուն մէջ տեսնելով հարազատ եղբայրութիւնն ու անկեղծութիւնը, որ տարբեր ընկերութեանց հաւաքական կեանքի սահմաններէն սկսած է հեռանալ առհասարակ: Անվերջանալի յուշերը, դպրեվանքեան հին օրերէն քաղուած մանրավէպերը ու աշակերտական երբեմն չարութիւնները, Նշան Սրբազանին յիշողութեան մէջ միշտ թարմ կը մնային, ու զանոնք վերյիշեցնելով, եղբայրական հաւաքական կեանքը կը վերանորոգէր, հին սերունդը նորին կապելու ճարտար ողջմտութեամբ:

Մանկութեան, լեռնալիբանանի Շթորա գիւղի արաբական միջավայրին մէջ իր առաջին բառերը թրթուած Նշան Սրբազան, Դպրեվանքի յարկին տակ շուտով տիրապետեց հայերէն լեզուին, եւ սահուն մայրենիով իր մտածումները արտայայտելու կարողութիւն ցուցաբերեց: Իսկ աւելի ուշ՝ ժողովական կեանքի մէջ, առաջադրուած հարցերը քննարկելու յստակատեսութիւն եւ հեղինակաւոր շեշտ աւելցուց իր արտայայտութիւններուն, զգացականութիւնը միշտ վառ պահելով իր արտասանած իւրաքանչիւր խօսքին մէջ: Լեզուական նոյն ճարտարութիւնը պիտի ցուցաբերէր նաեւ հետագային պարսկերէնի ու ազերիական թրքերէնի մէջ, սահուն արտայայտուելով այդ երկու լեզուներով եւս:

Լեզուն գիրի վերածելու, ու իր ապրումները թուղթին յանձնելու սովորութիւնը եւս բնա՛ւ չմեռցուց իր մէջ: «Դպրեվանքեան Ղօղանջ» պարբերականի, «Գլածոր» Տարեգիրքի եւ հետագային Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Հասկ» Պաշտօնաթերթին մէջ իր առաջին քայլերը առնելով, Նշան Սրբազան հետզհետէ թարգմանական եւ ուսումնասիրական իր աշխատանքներով, մտաւորական հոգեւորականի յատկանիշներ եւս ցուցաբերեց: Արեղայական տարիներուն իր խնամուած քարոզներու ժողովածուն լոյս ընծայեց Կաթողիկոսարանի Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքին խմբագրութեամբ, իսկ իր առաջնորդական տարիներուն, մի քանի հատորներով ի մի խմբեց տարիներու ընթացքին իր աշխատութիւնները, որոնք բոլորն ալ հոգեւոր ու ազգային ապրումներով թրծուած գրութիւններ ըլլալով, իր յաւերժական կտակը պիտի դառնան ընթերցողներուն ընծայուած: Իսկ վերջին տարիներուն, Թեմի պաշտօնաթերթ «Արտագ»ը եւս մտաւորական իր հակումներուն արդիւնքը պիտի ըլլար, հարուստ բովանդակութեամբ ու ժողովրդային մօտեցումներով:

Պատմական Թեմի մէջ իր ծառայութիւնը նաեւ զինք պիտի դարձնէր բժախնդիր պաշտպանը այն կոթողներուն, որոնք մեր եկեղեցւոյ քարահունչ պատմութիւնը կը ներկայացնեն, լուռ վկան հանդիսանալով հարուստ մշակոյթի ու խոր հաւատքի: Մակուի մէջ Ս. Թադէի վանքը՝ հայոց հնագոյն սրբավայրը, Օործորի եկեղեցին, Ս. Ստեփանոս Նախավկայի վանքը Արաքսի ափին, ինչպէս նաեւ բազմաթիւ խոնարհած եկեղեցիներ ու մատուռներ, իր յարատեւ այցելութեան վայրերն էին: Իսկ անոնց նկատմամբ Իրանի կառավարութեան մշակոյթի նախարարութեան երեւելի հոգածութեան զծով, մեր ժողովուրդը շատ բան կը պարտի Նշան Սրբազանի անձնական կապերուն ու հնարամիտ քայլերուն:

Յայոց իրաւունքներու պաշտպանութեան դասերը Դպրեվանքի գրասեղաններուն ետին իբրեւ ոգի ստացած այս ուշիմ աշակերտը, ինք պիտի ըլլար առաջին ահագանգ հնչեցնողը համայն աշխարհին, Նախիջեւանի մէջ Ազերիներու կողմէ օր ցերեկով գործուած ոճիրներուն՝ պատմական Ջուղայի գերեզմանատան հայկական խաչքարերու քանդումին ու ոչնչացման մասին: Լեռնագնացութեան սէրը իր ծննդավայր գիւղէն ժառանգած ըլլալով, Նշան Սրբազան անձամբ պիտի երթար մինչեւ Իրանեան ափը Արաքս գետին, ու տեսագրէր մշակութային վերջին եղեմը մեր ժամանակակից պատմութեան: Որսորդի հագուստով ծպտուած, Ատրպատականի Յայոց Թեմի քաջարի Առաջնորդին պիտի յաջողուէր շատ մօտէն նկարահանել այն, ինչ որ անցեալին կատարուած էր թուրքին կողմէ, քաղաքակիրթ աշխարհի կոյր աչքերուն դիմաց...:

Հիմա, անշնչացած է Սրբազանին կայտառ մարմինը, առ յաւէտ պապանձած է զուարթախօս լեզուն, յետ այսու միշտ բացակայ պիտի ըլլայ իր հաճելի ներկայութիւնը, սակայն Մեծի Տանն Կիլիկիոյ մեր Միաբանութեան մէջ միշտ պիտի յիշուի ան, իր խիզախ նկարագրով ու բարի յիշատակներով:

Վանաքնակ միաբաններու արցունքէն սկսան ճարճատիլ վանքի ուխտասեղաններուն դիմաց վառուղ մեղրամոմերը, հեկեկալով այս անժամանակ կորուստին համար: Իսկ Անթիլիասի Մայր Խորանին վրայ, իր գահին մէջ բազմած Աստուածամօր փափուկ սիրտը անգամ մը եւս ճնլուելով, դարձեալ տամկացուց անոր մայրական քնքուշ աչքերը...:

Ցյարութիւն: Ափսո՛ս որ դեռ միւռնը չէ չորցած, Սրբազան:

ԳՐԻԳՈՐ Ծ. ՎՐԴ. ԶԻՖԹԵԱՆ